


ԲԱԺԱՆՈՐՈՎԱԳՐՈՒՄ
 ոչխարից համար
 Տարեկան 10 3/10
 Վեցամսեայ 5 8-9 V
 Իրատեսակի համար Տարեկան 12 »
 Վեցամսեայ 6 »
 Անկերիսայի համար Տարեկան 2.50 և իր.
 Վեցամսեայ 1.25 »
ՎԱՆԻՒԿ ՎՃԱՐՆԵԼԻ
 Իրատեսակի սոյոք առաջին երեսին համար 40 սակարիս է. իսկ վերջին երեսին համար 20 սակարիս է. երեսին սակարիս անգամներու համար 20 Օ10 զեղջ կրուայ :



ՇԱԲԱԹ

Redaktion на вѣстникъ «Шаржумъ» Варна.
 Redaction du journal «Charjoum» Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿԸ ՀՐԾՏԱՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵԲՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՈՐԵՐԸ
 Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

Գրութիւնք ևս չեն տրուիր
 (Գին. 10 ԱՆԻՔԻՄ)

Ա Ձ Դ

Վազը կիրակի, հոկտեմբեր 3, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարել ասան Վառնայի և Թիլիսիի զաշնակցականները, էրպրոմի մէջ կախուած էրզրումցի Արամ Արամեանի (Թաթուլ) համար :
 Կը յուսանք թէ նոյնը պիտի ընեն նաև միւս քաղաքներու երիտասարդութիւնը հայ անչուգական յեղափոխականներէն մէկուն յիշատակը յարգելու համար :

ԿԱՐԱՂԱՆԸ

Հայկական դահիճը մի զոհ էլ խլեց մեզինքս . մի արի հայ երիտասարդ էլ կախաղան հանեց, սպանեց ամենանարգ մահով : Մի հայ կտրիճ էլ փոխանակ պատերազմի դաշտում գնդակախորով լինելու՝ արդէն վրէժի ծարախց յագեցած, կախաղանի վրայ խեղդվելով փչեց իր հայրենասէր շունչը . . .
 Կոտորածներով չէ գոհանում կարմիր Սուլթանը. նա կոտորում է ոչ ապստամբ հայերին, իսկ իր երկիրը տակն ու վրա առնող հայ քաջին կամ բանտարում շղթայակապ փթեցնում է կամ կախում . . .
 Նա Պոլսի կամուրջի վրա կախեց երեք հայ քաջեր, կախեց ժիրայրին, և մի ամիս առաջ էլ Արամ Արամեանին Վարինի մէջ :
 Կոտորում է Սուլթանը հայութիւնը ջնջելու և սարսափեցնելու համար . կախում է Սուլթանը հայ յեղափոխականին զարհուրեցնելու և ապստամբական ոգին խեղդելու համար : Բայց հասնում է իր ցանկացած նպատակին . ոչ և հազար անգամ ոչ :
 Սպանված հայի արիւնը ոռոգում է սարուկի երկիրը քաջեր ծնեցնելու համար . նա սողալով մտնում է կենդանի սարուկ հայի պաղած արեան մէջ՝ եռացնում և կռի գաշքը մղում :

Կախաղանի անարգ սիւնի վրա խեղդվող հայ քաջի խախտողը, փոխանակ սարսափ տարածելու, որոտումով արձագանք է տալիս մեր հայրենիքի բոլոր անկիւններում և ի վէժ, ի վրէժ, ի մարտ հրաւիրում . . .
 Հրճվում է կարմիր Սուլթանը. հայ կտրիճները մաշվում են բանտերում, հայ հերոսները կախվում են հրապարակների վրա, իսկ հայ ժողովրդը հեծում, իր սեւ օրն է սգում և վրէժ մոռնչում . . .
 Հրճուի Սուլթան Համիտ . . . խնդա՛ դիւային ծիծաղովդ, փքվիր քո երեւուն գահիդ վրա, և կարծիր թէ հայը ջնջվում է . . .
 Հոգ չէ, կը գայ ժամանակ որ հայն էլ կը խնդայ քո իշխանութեան փլուտակների զլխին բարձրաձայն :

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊՈՒՐԿԱԶ . 24 Սեպտ.
 Կարգ մը յառաջդիմասէր և հետաքրքիր մարդերու փափաքանաց համեմատ խօստացած էլ տեղւոյս պանդուխտ հայ տարրին մասին գրել : Ասկէց առաջ «Շարժում»-ի 136 և 137 համարներուն մէջ կարճառոտ կերպով նկարագրած է ի անոք նիւթական վիճակը, սակայն տեղւոյս դպրոցական ու թաղական խորհրդոյ անմիջական խնդիրներն արդէր եղան խոստումս ամբողջովին կատարելու . իսկ այժմ պատեհ առիթ ներկայանալով կուզեմ օգտուիլ :
 Տեղւոյս հայ տարրը անուս և տգէտ բնուակիր դասակարգէ կը կազմուի, որ երեք չորս շաբաթով շնորհէ կը կառավարուին կամ կառաջնորդուին . այս վերջինները միմեանց զէմ հակառակած՝ զործերու գիները կոտրած են ի վնաս բնուակիր պանդուխտ եղբարց, սակայն չը կարծուի թէ շաբաթներն ալ այդ վնասին ընկեր են . ո՛չ, այլ իրենք, որքան որ զործերը վար գներով առնելու ըլլան, նորէն շահին երեք

մասը փառուորագէտ կուլ տալէ յետոյ, մնացեալ մէկ մասն կամ քիչ մը աւելին կը շարունակելու բնուակիր եղբարց իրենց քրտնաթոր աշխատութեան փոխարէն . իբրեւ օրական, որ կարճէ մօտաւորագէտ 100 տրամ չոր հացի և մէ ծխախոտի զինք . այդպիսով այդ արիւնարբու տղորուներն իրենց գրպաններն լեցուն կը պահեն :
 Այժմ կարգը կուգայ յիշեալ լեցուն գրպաններն ու քսակներն դատարկացնելուն . այդ անպայտ, գաղան և մի խօսքով մարդկութեան ամէն յատկութիւններէն զուրկ, կրօնի և ազգութեան թըշնամի շաղուշներն, ինչպէս որ տեղւոյս հայոց մեծ մասն լուստեղեակ է, ծայրայեղ անբարոյական լինելով իրենք զիրենք անառակութեանց ու զեղխութեանց տուած, մէկ շարժուման մէջ շահածին գրեթէ մէկ աւուր մէջ կը մտնեն, կը պարպեն իրենց քսակը . և ասոր հետեւանքը կը ըլլայ տարապայման խեղճութիւն ու չքաւորութիւն . ասով չի չի բաւականանալով, կաշխատին տգէտ ու խեղճ եղբարց ալ, ամէն միջոցներ ձեռք առնելով, իրենց վատութեանց հետեւեցնելու, հակառակ պարագային զրկելով զանոնք աշխատանքէ և օրական ստանալէ : Այս պատճառաւ ցու է մեզ ի վեր հանել թէ՛ թէպէտ անուս, այլ աւանդական բարոյականի տէր անձինք յակամայից կը համակերպին իրենց գործապետներու ամէն տեսակ աղտոյի օրինակներուն, այնպէս որ երբեմն յիշեալ բնուակիրներու մէջ ընդունուած ու պաշտած ամէն տեսակ սրբութիւններ, այսօր պիղծ կերելի իրենց աչքին, իսկ այլազան անբարոյականութիւններ պարզ կերպով սրբութիւններ են ատոնց համար . և ցուալի է տեսնել՝ սիրելի ընթերցող, թէ ատոնք արագընթաց քայլերով գէպի անգունը կը գահավիժին, իրենց ետեւէն միմային չար օրինակի հետքեր թողլով նոր սերունդին : Ահա ատ կորուստի տանող խնդիրն է որ ինկատի առնելով, լրագրութեանց ու շա

դրութիւնը կը հրաւիրենք Պուրկաղի պանդուխտ գաւառացի հայերուն վրայ, գիտնալով թէ լրագրութիւնը իբրև ժողովրդական վարժարան ու վարժապետ պիտի կարենայ արող բարոյական ոճրագործութեան առջեւ առնել, ատոնց առաջնորդներուն անունը, մականունը թերթերու միջոցաւ խայտառակելով :
 Մարգար չափուշ 1895 թուականէն սկսեալ Պուրկաղի Տրէյֆուսի ցորենի ընկերութեան մէջ աշխատելով, տարին առնուազն 155 գաղիական ոսկիէն աւելի կը շահի . և այսօր հարիւրաւոր ոսկիներ ունենալու փոխարէն, 155 ոսկի ալ պարտքի ներքեւ կը գտնուի, տեղը չէ հարցնելու թէ ո՛ւր է շահը և ինչո՞ւ պարտքի տակ ինկած ես . ասկէ ի դատ չափուշութիւնը բաւ չը համարելով՝ Մշոյ վաճառականներէն Տէր Պոլոսեաններու «փօլիցա»-ի վերաբերեալ գործողութիւններն ալ իր վրայ կառնէ և մէկ երկու ամիսներ շարունակելէ յետոյ, Մշեցի հայերէն 30 ոսկեայ չափ գումար մը կը յանձնուի իրեն, հայրենեաց մէջ գտնուող իրենց անօթի և մերկ ընտանեաց զրկելու գիտումով : Զափուշը շուտով հասցնելու համար կապահովէ զիրենք (խօսքով), սակայն քիչ մամանակէ յետոյ՝ երբ անոնց ընտանեաց կողմանէ ետեւէ ետեւ աղեխարչ տեսարաններ ներկայացնող նամակներ կը հասնին տեղս իրենց ամուսիններուն անօթութիւններ և մերկութիւններ ծանուցանող . ահա՛ այդ ատեն խեղճ մարդիկ կը հասկնան թէ յանձնուած դրամը իր տեղը չէ զրկուած . և այսպէսով խայտառակութիւնը երեսան կելլէ :
 Ինչպէս որ Մշեցի ունի և կը վայելէ իր «բարի ծաղիկ»ը, նոյնէն առաւել եւս վատթարն ունի Վանցին—Վարդան չափուշը ըստաճը—պարսկական մէկ հատիկ տիպար մը նկատուի հրապարակի վրայ : Այս երկուքը իրենց հետ միացուցած են Մշեցի խայլէճի մը, և թուումպաճի մը . որ այժմ չափուշ անունով կը ճանչցուի, հաշակաւոր դաստառն ևս իրենց

հետ ամէն տեսակ խայտառակութիւններ կընեն. ոչ Աստուծոյն կը վախնան, և ոչ ալ մարդոցմէ կամչնան:

Քիչ մըն ալ գաղթականութեան վերաբերմամբ:

Վերջին դէպքին տեղս հասնող գաղթական հայ ընտանիքներ իրենց թշուառութիւնէն մղուած այդ վայրերն չափով շնորհուն կը գիմէին օգնութիւն մը և կամ հացագին խնդրելու. յանուն ալքատի կսկէք պնակներ շրջագայել ժողովրդեան մէջ, հանգանակելու համար. սակայն առդին ցաւալի՜ կէտը սա էր որ, փոխանակ արգիւնքը նոյն թըշուառ քոյրերուն ու մայրերուն տալով զանոնք մխիթարելու և անոնց ցաւերն ամօքելու, այդ դրամով անոնց պատուը կը սակարկուէր, և յետոյ դրամը կը արուէր իբրև հացագին. անկեղծ նախադրութիւններն ի շտր կը գործածուէին. ահա այդպիսով թիւրքին ու քիւրախին ձեռքէն փախած մեր թշուառ քոյրերուն ու մայրերուն ցաւերն եւս առաւել կը բազմապատկուէին իրենց անպատուելովը. նոյնիսկ իրենց արեւակիցիներէն: Մեր գրածն ու խօսածը վէպ մը չէ՜, այլ ճշմարիտ իրականութիւն, որոյ մէկ քանիներին ալ ականառես եղած ենք. ի վկայութիւն պէտք եղած ժամուն:

Այս ամէնը գրելէ խօսելէ ու խոստովանելէ ետքը, դառնանք քիչ մըն ալ մեր վարժապետին. — «Չլրամբն» — հերիք չէ՜ խուլ ու մութ անկիւններ մտնելով Չափուն շնորհող հետ առ ուն կը բամբասէք, եթէ «նարժուում» կամ այլ լրագրի թղթակիցը ինչպէս գուն քու տկար խելքովը կը կարծես թէ քահանան է, պէտք

է հարցնել խմբագրութիւններէն զրկուած յօդուածներու սարքագրութիւնն, ով ըլլալ հասկընալու համար: Չէ՜ լաւ դիտես գրողը, սովայն տիւնայ անցնել չկարողանալուդ, ուղղակի կրօնականի վէշէն կը կը բռնես. ինչ որ ըրած էիր էտիրնէի մէջ ալ. եթէ ցարդ քու մասին գրուածները զրպարտութիւն էին, ինչո՞ւ համար պատուդ չես պաշտպաներ ասպարէզ իջնելով. չէ՜՞ որ սկիզբէն մինչև վերջ թերթերու միջոցաւ ընկերական ասանի հրատարակելով, բայց չնեղվայնալէ զատ «պապանձումն Զաքարիայի» եղաք: Սրգե՞ք զպարօցին մէջ դեռահաս օրիորդներու կարմրուկ այտերուն խնդիրը զորս զալէ՞ն վախցաք. եթէ անպարտ ես, հրամայէ՜ ընկերական ասանը կազմ ու պատրաստ է. կը կարծես թէ լուռ ու մունջ մնալով և մի քանի տգէտներու ուժովը վերստին դարձցին շէմէն ներս մտնալով ինքզինքդ պաշտպանած կըլլաս. ո՛չ բարեկամ ո՛չ, լաւ գիտցիր թէ այդ սեղ բարոյականի վար մըն է, քեզի նմանները չեն կրնար հոգ պարտուելը իրենց:

ԻՍԼԻՄԻԱ, 26 Սեպտ.

Հայութեան նուազ ուսեալ գառակարգին պատկանող անհասաներ կան, որոնք զուրկ որ և է հաստատուն գաղափարէ, գրելու յաւակնութիւնը ունին, յօդուածներ կը գրեն, թղթակցութիւններ կընեն, և սակայն ասանց գիտնալու թէ՜ ի՞նչ է յօդուածագրի մը պարտքը: Անկեղծ մտմուլը որ ժողովրդի զարգացման նուիրուած՝ ու անոր յառաջդիմութեան զարկ մը տալու համար եղած է, շատ անգամ զուրկ չէ

այնպիսի նամակներ հրատարակել, որոնք բոլորովին հետեւ ճշմարտութենէ՜ մաքր պղտորելու, սե է անձ մը պաշտպանելու, կամ անձնական հպարտեւ մը յառաջ ասնելու կը ծառայեն. այսպիսի գրութիւններ յաճախ մամուլի վարկը կը կոտրեն, և անվտանգութիւն կը ներշնչեն ընթերցող հասարակութեան:

Յօդուածագրի մը սովորաբար պարտքն է իրերը խիտ մօտէն քննել, և յետոյ հրապարակ նետուել. ճշմարտութեան վերահասու ըլլալու հայ մեր Պ. Յ. Թօօի նամակը այս կարգէն չէր, և ոչ պատասխան մը մեր դրամին, մեր այս պատասխանը վերջինն ըլլալով, կը խնդրենք Պ. Յ. Թօօն որ ուշագրութեամբ կարգայ զայն:

Վրեմի թէ երեք տարի առաջ ինչ հատրթներ ունեցած է տեղւոյն եկեղեցին. կուզէ՞ք որ ըսեմ, պարտքերու կոյտ մը. և ինչո՞ւ հինքը պարպենք. տգիտութեան շնորհիւ Խալիփան չէ միայն, այլ ամբողջ հայութիւնը կրամ է նիւթական բարոյական ամենամեծ փլուզները. բայց այս տեղինին համար դուք իբր գիտակ և գիտուն մէկը՝ ունիք ձեր յանցանքներու բաժինը:

Կը ցաւիմ որ լոյս աչքով չէք տեսներ մութ և արտուի մը նմանութիւն ունեցող վարժարանին վերանորոգութիւնը, անոր կից քահանային սենեակին՝ և որի շէնքի մը շինութիւնը. կը մտնումք հինէն մնացած այլ և այլ արարքերու վճարումները. չէ՞ք յիշեր որ ջաղացքը պիտի գրատուէր, և ո՞վ կամ ի՞նչպէս ազատուեցաւ. արգեօք հետաքրքրուեցաք. գիտէք որ ամբողջ տարի մը քահանան ամսականի երես տեսած չէր, և որ խեղճը հայրենիք ստակ զրկելու համար

իր ընտանեաց, ծանօթ հայու մը երաշխաւորութեամբ հրէա սեղանաւորէն տակոսով տոած՝ և զըրկած էր: Աւելին կայ, տեղւոյն նախորդ դատաւոր Յարութիւն Հայրապետեան իր ամսականներու մնացածէն զիտէ՞ք որչափ գրամ կը պահանջէր, ամբողջ 2000 — 3000 զրուշ. ինչպէս տեղեկացած ենք, հիւանդ անկողնոյն մէջ զուրկ նիւթականէ, վերջապէս թշուառ մեռած է ազգին այդ աշխատաւորը. Պ. Յ. Թօօ՜ ահա այսօր քու չի հաւնած թաղ. խորհուրդդ է որ դրամները իր տակոսով կը վճարէ հանդուցեալին այրի կնոջ:

Կը հարցնէք թէ թաղական և հոգաբարձուները ի՞նչ կանոնաւոր ժողովներ ունեցան, և քանի՞ անգամ այցելեցին վարժարանը: Կանոնաւոր ժողովներ ունենալուն կամ ոչ, կրնաք ուղղակի դիմել անոնց և կարողալ արձանագրութիւնները բայց ի՞նչ, մի թէ թաղային ժողովները ի՞նչ թայն թմբկոյ կը կատարուին. չէ՞ մի որ գաղտնի կըլլան. թեր ուղէ՞մ կարծիքներէ վերջ՝ որոշումներ կը արուին և կը գործադրուին: Վարժարանը չայցելելուն համար ըրած գիտալութիւնիդ իրաւացի է. բայց դուք որ ստեղծի հոյսեր կառնէք, իբր ազգատնհատ նուազ պարտականութիւն ունէիք վարժարանը այցելելու, և քանի՞ անգամ այցելեցիք. եթէ վարժարանին որի է բարեխառութիւն չունեցան, ինչպէս կըսէք, ինչո՞ւ երեք տարիէ ի վեր լուծութիւն պահեցիք. այսպէս կը պահանջէ՞ք անհաստական պարտականութիւնը. ուրեմն ձեր բացազանջութիւնները կամ պարտաւ են, և կամ գաղտնիք մը կը պարտենակեն իրենց մէջը, որուն հետամուտ ըլլալ չենք ու

Գ Ի Տ Ա Կ Ա Ն

ՄՏԻՒ ՈՒՎԱՅՊԱՌՈՒԹԻՒՆԸ ԵՐԿՐՈՒԱԿԱՆ ՎԱՐՃԱՐԱՆՆԵՐՈՒՄ

(Շար. նախորդ թիւի և վերջ)

Նոյն կօնգրէսու միջոցով վերսկրատուա կու քիրսքարա (Մասկվայից) աղջկանց զպրօցներում մտցվելիք ֆիզիքական վարժութիւններին մասին խօսելիս ասում է. «Արկրօրդական վարժարաններում աշակերտներին հարկադրող նստողական կիսաքը անտարակոյս նրանց անողջութեան վնասակար է. ֆիզիքական գաստիարակութիւնը զպրօցներում շատ անտեսուած է և նոյնիսկ ցերեկօթիկներին մեծագոյն մասի համար. բոլորովին արտաքսված է: Դպրօցը ոչ միայն մարտի աշակերտներին մասաւոր զարգացման հոգ տանիլ, այլև նրանց ֆիզիքական գաստիարակութիւնը պէտք է մուտ գանէ զպրօցական ծրագրի և գասերի ժամանակացոյցներին մէջ: Ժամանակի

պակասութիւնը ֆիզիքական գաստիարակութեան մի արգելք չէ կարող լինել: Աղջկանց վարժարաններում մարմնամարզը իբր դիսցիպլինայի միջոց անհրաժեշտ չէ: Զանազան մարմնամարզական դրութիւններում գործածուած գործիքներով վարժութիւնները, նոյնպէս գաւազաններով, երկգնդիկներով (նաղիւ) վարժութիւնները, աղջկանց վարժարաններից կարելի է արտաքսել. աշակերտների զարգացման և անողջութեան համար ստանց որ և է կրթութեան: Մրանց կարող են փոխանորդել աւելի օգտակար կերպով գնդակախաղը և ուրիշ խաղեր:

Ֆիզիքական վարժութիւնները կարող են սահմանափակվել հետևեալ վարժութիւններում. Ա.—խաղերի համար իբր նախապատրաստական վարժութիւններ (թաղի, վաղի, ցասկի և հաւասարակշռութեան վարժութիւններ) Բ.—զպրօցում կամ բացօդային խաղեր —Վ.—գնդակախաղեր. Գ.—ընդհանուր երգեցողութիւն. Ե.—պարեր, Զ.—ձմեռը չմշկում, ամառը լողալ, թիւս վարժութիւն և պոստյաներ: Դպրօցում տեղի ունենալիք խաղերի համար աշակերտներին բաւարարող տեղ չկալի: Սրբիակ, ձեռնից ո՞վ

կանաչափ տեղ յատկացնելը անհրաժեշտ է. ինչպէս քացոյեայ խաղերի համար, և նրանց ժամանակ տալը սահմանաւայնաւոր խաղալու համար:

Դժբաղդարար ամէն տեղ, հայ վարժարաններում մի միայն մասաւոր գաստիարակութեան, այսինքն մասնաւորապէս կրթութեան համար աշխատում են. և այն էլ, պէտք է խոստովանել, որ շատ թերի ու անյարմար կերպով: Իսկ բուն գաստիարակութիւնը, այսինքն հոգու և սրտի գաստիարակութիւնը, բնաւորութեան, վարք ու բարքի և լաւ նկարագրի կազմութիւնը, ֆիզիքական զարգացումը և անողջութեան հսկողութիւնը բոլորովին անտես անուած է մեր զպրօցներում:

Պէտք է համոզուած լինել, որ այս երեք կերպ գաստիարակութիւնները՝ մասաւոր, ֆիզիքական և բարոյական, միմեանց լրացուցիչ են, միմեանց նեւ սերտիւ կապուել են. չէ կարելի մի միտից բաժանել ու հեռացնել, չէ կարելի մէկին ոյժ տալ և միւսին ոչ, հակառակ դեպքում մենք կուենանաք մի անպէտք սերունդ, անպէտք ու անյարմար ամէն գործի: Օրինակ, ձեռնից ո՞վ

կը ցանկար ունենալ մի եզրայր, քոյր կամ գաւայ, որը մտքով շատ բարձր դիրքի վրա կանգնած լինելով հանդերձ, ֆիզիքապէս մաշուած է, անկարող է որ և է աշխատութեան, ոչ միայն ֆիզիքական, այլ և մասաւոր, որովհետև միտքն էլ կարծում ունի ուղեղից և ուղեղը վերաբերում է ֆիզիքականին: Աւելի առաջ գնանք. համարենք թէ, ինչպէս յաճախ պատահում է, թոքախտի է ենթարկուած. . . Այլ օրինակ, ձեռնից ո՞վ կը ցանկար ունենալ մի զաւակ որը համարաբաններ տւարտած լինելով՝ եւ ֆիզիքապէս ուժեղ լինելով՝ հանդերձ, շատ ստոր վարք ու բարքի տէր լինէր, զուրկ լաւ նկարագրից, բարոյականութիւնից և վստմ զգացմունքներից. վերջապէս ստախօս, անբարոյական, կեղծաւոր, խորգայն, անխիղճ, ալիօլաժող, սրկիայ, գող եւայլն եւայլն:

Ես շատ լաւ համոզուած եմ, որ ձեռնից ոչ ոք կը ցանկար ունենալ մի այսպիսի գաւակ կամ եղբայր և կամ քոյր: Սակայն այլ է ցանկանալը և այլ գործարարելը. դուք թիւս տղամ չէք ցանկար վերոյիշեալ օրինակներով հոգեհասարակներ ունե

գեր. զի մենք մեր գործն ունինք .

Առանց խղճի «էսկի թաս էսկի համար» ալ չենք կրնար բռնել կրթութիւնը, բայց դա բոլորովին պարտաւորութիւնն է : Պարոն, հինէն ի՞նչ կար և ի՞նչ ունէիք արդեօք հանրաժամութիւն խաչագող տէր կարգակերտին օրը կուզէք յիշել թէ . . . չէ՛ պարոն չէ՛ ի զուր մի շարժէք ձեր գրիչը, և եթէ կը շարժէք ալ նայեցէք որ ձեր գրիչէն բարիքներ ծնի . լաւ նկատողութեան առէք ունէ գրութեան մը քննադատութեան արժանի կէտերը . մի մտնաք լաւ ուսումնասիրելու քաղաքիս հայ գաղթականութեան անցեալ կըրթական կեանքը . լաւ կրնէք որ ամէն խնդրոց խորը մտնէք, քննէք և յետոյ հրապարակ նետուիք : Այն ալ գիտէք ինչո՞ւ . լաւի և աղագոյտ արդիւնք մը ձեր բերելու նպատակաւ, և ո՛չ մտքեր պղտորելու . այն ատեն պիտի հաստանաք թէ դո՛ւք էք զգալուն և ճշմարիտ հայը :

Բայց եթէ կուզէք ձեր «սոսիս վրայ» յամառիլ, և ձեր ետմը իսկիմիան իր հին ու փտտած գրութեան վերածել, կեցցէք . մենք կը լռենք այլեւս առանց պատասխան մը տալու ձեզ : ()

ՎԱՀԷ

Յ. Գ. — Չմտնամ՝ յիշել որ քաղաքիս հայ վաճառականներէն Տ. Մարտիկ Սուխիձեղեան ո՛չ նուազ ստորած է վարժարանիս յառաջդիմութեան և եկեղեցւոյս բարեկարգութեանը, նիթապէս և բարոյապէս աջակ-

() Սրանով կը վերջաննէք իւր լիմալի այս վիճարանութիւնը : Այլեւս ո՛չ մի յոգեւած չենք սպեր աչս խնդրի մասին : Բաւական երկարեցաւ :

Ծ. Խ.

ցելով պատ. թագ. և հոգաբարձու պաշտօնէութեանց : Կը յուսանք թէ իր հոգաբարձութեան պաշտօնին մէջ աւելին պիտի ընէ :

Խոյն

«ԻՐԱՆԻՆԻ» Ե. Գ. ԻՆ

Շատ ուրախ եմ որ տեղական «գրապարտիչ» թերթի 162 թիւին մէջ «Նամակ խմբագրութեան» վերնագրով Յ. Թ. ստորագրութեամբ յօդուածս կարգացրէք . ես ալ ձեր աննպատակ և անգոյն թերթի անցեալ շտաբաշարի սրտան թիւին մէջ «Ձեր յարձակում» վերնագրով և Յ. Գ. ստորագրութեամբ յօդուածը կարգալու պատիւը ունեցայ, որուն կողմ պատասխանել որչափ որ կարելի է հակիրճ կերպիւ :

Անշուշտ պիտի ներէք որ, ձեր անձին գէ՛մ ուղղած խօսքերուն գեւ չի պատասխանած, իրեն սկզբունքներուն հաւատարիմ և ընդհանուրին շահերուն նուիրուած թերթի մը ձեր սուած ածականին առթիւ մի քանի խօսք խօսինք :

Ձրպարտիչ հէ՛, այդպէս կը հասկնաք Պ. խմբագիր լրագրի մը ուղղութիւնը . ատոր չեմ գարմանար, իրաւ է որ ձեր ուղղութեան հակոտնեայն է . ինչպէ՞ս, կուզէ՞ք որ նա ալ ձեզի պէս շոյէ, փոխանակ խնդիրները լուսարանելու և միտքերը լուսաւորելու, ալ աւելի մթաղնէ և մուրեցնէ . փոխանակ մեր յոսի սովորութիւններուն և հիներէն ժառանգած նախապաշարութեան ոգէ՛մ կռուելու, զանոնք պաշտպանէ և քաջալերէ . չէ՛, պարոն այդ գերը կրնան կատարել և լիսի կատարելու վրայ, եւ միայն այն թերթերը, որոնք ու իցէ ուղղու-

թենէ բարձրին զուրկ, լոկ իրենց ճշմարտութիւնը պահելու համար, թուղթ կը մրտանն :

Իրանի շար նախանձնէ որ այդ գարշելի բառարտասանելու երէ ձեզի, սակայն անհոգ եղէք բարեկամս, հասարակութիւնը շատ լաւ կրնայ զոնազանել և գնահատել օգտակարը՝ անօգուղէն, անկեղծը՝ կեղծէն . ուրեմն խօսքս մասնատրելով, համարձակօրէն կրնամ ըսել թէ՛ «Շարժում» նոր գաղափարներու օտկան է, և հետեւաբար թէ ընթերցողներն և թէ գրողներն գաղափարական մարդիկ են առհասարակ . իսկ ձեր թերթը կը մրտանն պահպանողական փտտած ուղղութիւն և կը կարգան ու իցէ գաղափարէ զուրկ սղորմելի ուղղութիւն, և կամ հայերէն բնաւ չի հասկցողներ . ուրեմն, երախտապարտ պէտք է ըլլաք անոնց, զի ձեր թերթին գոյութիւնը անոնց կը պարտիր :

Իսկ գաղով անձիս վերաբերեալ կէտերուն, ամէնուն մի առ մի չը պիտի պատասխանեմ և միայն սա երկու կէտերուն կուզեմ պատասխանել . կը գրէիք . «քանի որ իր աչքերը նոր բացուած են իր սիրեցեալ քահանային դատապարտութենէն վերջ» — իրեն պէս ուրիշ փորի ցաւեր ունեցողներ ալ բաներ մը ընել ուղղած են . ինչչէ՞ն դիտէք Պ. Խմբագիր թէ Տ. Պէտրոզ քահանան իմ սիրեցեալ քահանաս է . մի՞ թէ պաշտպանել ուղղուս համար այս հետեւութիւնը կը հանէք . շիտակը շատ լաւ արամբարանութիւն : Պարոն ինչո՞ւ անձը սկզբունքի հետ կը խառնէք և կը շիթէք . հիմա ձեզի կը հարցունեմ, Զօլան որ Տրէյֆուսը պաշտպանել ուղղուս համար՝ այնչափ անարգանքներու ենթարկուեցաւ, միթէ հրէա

Տրէյֆուսին բարեկամը ըլլալուն համար ուղեց պաշտպանել զանի, գուցէ անձամբ չէր ճանչնար իսկ . ուրեմն բացայայտ է թէ՛ Զօլան հրէա Տրէյֆուսը պաշտպանելով անձը չէր որ կը պաշտպանէր, այլ բնաբարուած իրաւունք մը ունեւորուած քրտնայի պատիւն էր որ կը պաշտպանէր, ուստի խօսքս մասնատրելով կը սեմ. այո՛, ստոյգ է որ ես Հիւրմիւլիզեան քահանան պաշտպանել ուղեցի և գեւ պիտի աշխատիմ ալ պաշտպանելու, սակայն չէ թէ անիկա իմ սիրեցեալ քահանաս և բարեկամս ըլլալուն համար . անձը կարեւորութիւն չունի կը հասկընա՞ք . այլ համոզուած եմ որ անիկա այս խնդրին մէջ կարգ մը անխիղճ մարդերուն էնթրիք և դատադրութեանց զոհն է, և հետեւաբար անմեղ է . Հոս, անաչառ ըլլալու համար, փակագծի մէջ պէտք է ըսեմ որ, գուցէ Հիւրմիւլիզեան քահանան իր պաշտօնին և ուրիշ պարագաներու մէջ թերութիւններ ունեցած է . սակայն, ինչպէս ամէն մարդ գիտէ, այս խնդրին մէջ անոր կատարած դերը երրորդական է, անկէ աւելի պատասխարտութեան և պատժոյ արժանիներ կային :

Գարձեալ «Իրաւունքի» Պ. խմբագիրը կը գրէր «բայց կերեւայ որ Պ. Յ. Թ. ինք խուլ և կոյր մը եղած է, չէ լսած և անուած» . պարոն ամէն մարդ գիտէ որ ես խանութպան, էսնաֆ մարդեմ, հետեւաբար, իմ գործիս արհեստիս քաղաքատմամբ, ինծի պէտք եղածէն աւելի լոյս և յոյս ունիմ . սակայն կը ցախիմ որ գուր խմբագիր ըլլալով հանդերձ, կոյր և տղէտ մնացած էր . և գիտէք ըստը դժբաղդութիւնը ասկէ առաջ լուրջոյ . ուստի նեղեցէք որ օրինակով մը միտքս

նալ, բայց գործնականին մէջ տարբեր էք խոհուսմ, տարբեր մասնուսմ և տարբեր գործուսմ : Այո՛, օրինակ վերցրէք ձեր դպրոցները, արդեօք նրանք կատարում են իրանց վրա ընկած այս երեք կարգի պարտականութիւնները . ո՛չ :

Ուրեմն, նշանակում է թէ դուք անգիտակցաբար ցանկանում էք ունենալ ֆիզիքական և բարոյական դատարարութիւնից զուրկ երեխաներ, անպէտք իրանք իրանց, անպէտք ձեզ և անպէտք ազգին և մարդկութեան :

Եթէ դուք այս մասին պարտաւորանալ լինիք, նախապէս պէտք է հոգնք, ունենալ լաւ վարք ու բարքի սէր, բարոյակազիւղ ու նկարագրով բարձր ուսուցիչներ . որովհետեւ նրանք են, որ աշակերտի մէջ պիտի մտցնեն բարոյական դատարարութեան սկզբունքները, նրանք պէտք է տան իրանց ունեցածից, եթէ լաւ են, լաւը . եւ եթէ վատ են, վատը . . . Այս մասին ամենափոքր պարտագանութիւն ո՞ճրագործութիւն է . բարեկամական, ազգակցական և խնամիրական պաշտպանութիւնները, (անշուշտ վատ ուսուցիչն նկատի ունենալով) ապագայ

սերունդի սրտին միվամ թունալից նետեր են . որոնք ապականում և վարակում են ամբողջ օրգանիզմը, նրանց դարձնելով բարոյապէս միտած արարածներ : Եւ այս ամէնը կատարվում են միմիայն յօգուտ վատ ուսուցչի և վնաս մատաղ սերունդի և հասարակութեան :

Բարոյական դատարարութեան խնդիրը մեզ զբաղեցնող ամենակարեւոր հարցն է, որովհետեւ մասամբ մատուրը մասնուսմ ենք, և ֆիզիքականն էլ հեշտ է . շատ փոքր զոհողութիւն է պահանջում . բայց բարոյական հարցը, ամէնքից աւելի անտեսուած, բարձր թողված և չը մտածված հարցն է . ամէնքից աւելի կարօտ մեր ուղղութիւնը և հոգածութիւնը գրասիւնը :

Այս կարեւոր հարցը լուծելու համար, կառավարիկմ, նախ՝ ուսուցիչներին բնաբուծեան մէջ բարոյականի և նկարագրի մասին մեծ ուշադրութիւն դարձնել և բնաբուծելու, առանց խնամիրական և բարեկամական կամ կուսակցական յետին մտքերի : Երկրորդ՝ պահանջել այդ ուսուցիչներին և հսկել նոյն իսկ նրանց վրա, օրպէս զի իրանց վրա ծանրացած պարտականութիւնը

անթերի կատարեն թէ բարոյական և թէ մատուր ու ֆիզիքական դատարարութեան մէջ : Երրորդ՝ ամէն ջանք ի գործ դնել պահելու համար լաւ և պարտաճանաչ ուսուցիչ : Զորրորդ՝ ընտանիքում և ու հոգ տանել մանկան բարոյական դատարարակութեան վրա, նրանց առջև շատ զգոյշ և խոհեմ լինել անյարմար և անպատշաճ խօսքերից և վարմունքներից . նրանց փոքր չը համարել, այլ նկատել նրանց արդէն պատրաստ ամէն բան սեպիլու և ամէն բան ընդօրինակելու :

Բարոյականի մասին այսքան խօսելուց յետոյ, կարեւոր եմ համարում մի քանի խօսք էլ ֆիզիքականի մասին խօսել :

Մանկան ֆիզիքական դատարարակութեան մէջ ուսուցիչները և թէ ծնողքները պէտք է գիտեն հետեւեալ սկզբունքները :

- 1. Մանկան օրուսայ 24 ժամերը հասարակապէս բաժանել աշխատութեան, կազդուող զբօսանքի և հանգստեան :
- 2. Մանկան խաղերը և ողջապահիկ զբօսանքները շարդիլիլ բնաւ, այլ այն նկատել իր լաւ աշխատելու մի պայման և կազդուութիւն մի միջոց :

3. Նրանք և յոգնեցողիչ շարժումներ կատարել չը տալ մատուր աշխատութիւնից անմիջապէս առաջ և ճաշերից անմիջապէս յետոյ, այլ միշտ ճաշերից առաջ և մատուր աշխատութիւններից մէկ երկու ժամ յետոյ :

4. Գրողներում և աներում դործիւնքով մարմնամարդի թուլութեան չսնել, եթէ մարմնամարդի մասնաւոր ուսուցիչ չը գտնուի, որովհետեւ չափազանց շարժումը յոգնածութիւն տալ կը բերէ և չափազանց յոգնածութիւնն էլ ուժասպառութիւն, որը փոխան օգուտի վնաս է պատճառում :

5. Մանկան տարիքը, ֆիզիքական կազմը և մատուր ընդունակութիւնը նկատի ունենալով կազմել դասերի ծրագիր, աւելորդ ծանօթութիւններով ուղեղը՝ չը ծանրաբեռնել և մտքի ուժասպառութիւն առաջ չը բերիլ :

6. Եւ վերջապէս, քիչ տալ յիշված զանազան խորհուրդներին ուշադրութիւն դարձնել և առաջարկված միջոցները գործադրել :

Դոկտ. Կ. Փաշայան

պարզեմ: Դուք խմբագիր չեղած կարծեմ ժամանակաւ առեւտուրով զբաղած էք, և գիտէք թէ վաճառականութեան մէջ, ամենէն առաջ, գրամագրութիւն պէտք է. իսկ գրամագրութիւն չունեցող վաճառական մը իր գործերը առաջ տանելու կարող ըլլալու համար, ուրիշներուն քրէտիին, օգնութեան անհրաժեշտ պէտք ունի, որովհետեւ քաջ գիտէ որ եթէ գուրեւն օգնութիւն չիգայ, իր գործերը չկրնար շարունակել: Եւ ամենպէս դուք ալ խմբագիր ըլլալու յանդիմութիւնը ունեցեր էք. նախապէս չը պատրաստուած. այսինքն առանց գրամագրութիւն, առանց պաշարի. ահաւասիկ Պ. խմբագիր ձեր մեկէ աւելի հաշիւներուն բուն գաղտնիքը ատոր մէջն է: Նախորդ դաստուները ձեր թերթին մէջ չէին գրեր, ուստի դուք և ձեր համախոհները բաւական աշխատեցաք, զանոնք հրատարակել տալու. իսկ նորերը, այսինքն Ֆէլէքսանները, Սուրենները և Զարգարները փոքր Աստուծոյ ապերախտ չեն. հարկաւ դուք երեւոյ համար բաւական աշխատեցաք, հիմա անոնք ալ փոխաւարձաբար պէտք է որ ձեզի աշխատին: Կը տեսնաք, ձեր կոյր կարծած անձը բաւական բաներ տեսեր է. սակայն այս ամինը լաւ գիտնալով, չեմ մեղադրեր ձեզ այլ կարգահատիմ:

Ինչպէս նախորդ նամակաւս ըստ ձեզ, իրրեւ վերջարան դարձեալ կըսեմ որ ոչ գաստուեմ, ոչ ալ գաստուութեան թեկնածու եմ, ոչ ալ հոգաբարձուներու դէմ, անձնական թշնամութիւն ունիմ, և ոչ ալ «Իրաւունք» Պ. խմբագրին դէմ անձնական սեւիցէ թշնամութիւն ունիմ. սակայն ինչպէս որ գիտեալ կուտայ. այո, փորձ ցաւ ունիմ, և փորձ ամենամեծ ցաւը այն է որ, խումբ մը անխիղճ մարդիկ, այլ և այլ նկատումներով. ոմանք իրենց փառասիրութեանց համար, և ոմանք իրենց անձնական շնչին շահուն ու հաշիւներուն համար, դայրոցը այսինքն ազգին մանկալին զոհեցին, և հիմա ալ ժողովուրդը խաբելու համար ելեր կը գրէք. «Կարժարանի տնօրէնութիւնը ամէն կասկածէ վեր անխառն բարոյականի տէր մարդու մը յանձնուէր է»: Է՛հ, ինչ ընենք ձեր մարդու մը անխառն բարոյականի տէր ըլլալը. մինչդեռ գլուխը գտնուած երիտասարդ դաստուներէն ոմանց բարոյականը շատ խառն է. և շարունակելով կըսէք. «այս տեսակետով Պ. Յ. Թ. դու ալ մեզ հետ ուրախ պէտք է ըլլաս, ինչպէս բոլոր Վառնացիք, և վստահ եղէք թէ նոր սերունդը, ազգին մանկալին է շահողը: Այո՛, սուտ չէք. այդ ահագին ֆրասէն փոքրիկ շահող մը եթէ կայ. այդ

ալ Պ. Կրօն Միքայէլեանն է. ինչպէս որ կը լսեմ, գաստուներուն փոփոխութեան պատճառաւ ազգային վարժարանի քիչ շատ նիւթական կարողութիւն ունեցող աշակերտները, ազգայինը լքանելով, հոն կը յաճախեն, և շատերն ալ մտադիր են եղեր յաճախելու:

Գիտեմ Պ. խմբագիր, այս գրածներս դուք նորէն ձրի յարձակում պիտի անուանէք, սակայն ֆրաստ չունի. եթէ դուք այս ազգայնասուզութիւնը շարունակելու լինիք, վստահ եղէք որ իրաւացի յարձակումին ալ ժամանակը չը պիտի ուշանայ:

Յ. Թ.

Վառնա, 1 հոկտ.

ՆԵՐՇՆՉՈՒՄՆԵՐ

«Իսկ թէ որ մըն ալ պիտի չերգեմ յաղթական՝ ու ցնծութեան թելիկ մըն ալ չի գտնեմ, յաւ է քարին զարնեմ քնարս ու փշրեմ»:

Գրքի առաջին երեսում ապոված նուագի այս վերջին տողերը բաւական են հասկնալու համար թէ, հեղինակը ինչով կարող է ոգևորվել: Պարզ է որ Պերճը ձանձրացել է միայն ազգի զօրազոյցութիւնները եւ ազգաները երգելուց. ձանձրացել է հայ ազգի լայկանը լինել, սգալ. յաղթական երգ է ուղղում. հակառակ գէպքում, պատրաստ է «Իր քնարը գարկել քարին ու փշրել»։ Եւ այդ գաղափարն է, յաղթութեան սենչն է որ Պերճին բանաստեղծի գոյն է տալիս և միայն այն ոտանաւորներն են բանաստեղծական աւելնող սծոված, որոց մէջ գուրեւ գալիս քաջ հայը, յաղթական հայը, Պ. Պերճը բանաստեղծ չէ, իր այս ստանաւորներին մեծամասնութեան մէջ, գուցէ նրա համար որ մեր կեանքի մէջ յաղթական րոպէներ շատ քիչ են ունեցել. իսկ Պերճի մուսան ոգևորվում է յաղթութեան գողափարով: Պերճին ոգևորելու համար, եթէ իսկապէս բանաստեղծական տաղանդ ունի, ազգային մեծ յաղթութիւններ են հարկաւոր. ինքը գործնական յիշափոխական լինելով՝ մեր ժողովրդի մէջ մինչև հիմա երեւած քաջութիւնները կորցրել են իրանց ազգեցութիւնը նրա աչքում:

Պերճի ոտանաւորները կարգալ պէտք է, մանաւանդ հայ որոշ տարրի համար. այն տարրի համար որ յուսահատվելու արամագրութիւններ ունի. որովհետեւ այդ ոտանաւորները պարզ կերպով պատկերացնում են գործնական, շարժարկած եւ ժողովրդի ծոցում գործող յեղափոխական գաղափարի հաւատարմաւոր ստանալու գինուորին:

ՎԱՐԴՉ

Ն Ա Մ Մ Կ Ա Ս Ո Ւ Փ

Զուիցերիա. Պ. Մարզ. — Պրաջիլայի գրադարանը գոյութիւն չունի. աւելի լաւ է ուղարկէք Կիլլորոս եւ Եգիպտոս: Այդ երկուքին հասցէն կրնանք ձեզ ուղարկել:

— Ֆիլիպպ, Վ. Մզ. — Ձեր յոգուածը չէ սպաղարուած միմիայն կրկնութիւն ըլլալուն համար:

—(—)

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

«Թան»-ին սեպ. 24ին գիշերուան ժամը 11ին տաւր մնացած, կը հեռագրեն թէ հայոց Պատրիարքը վերջնականապէս իր հրատարականը Սուրբաթին մատոյց գրաւոր կերպով: Կիլիսիոյ պատճառ բռնելով թէ, ոստիկանութիւնը կը ձերբակալէ ամէն հայ, նոյնիսկ անցագիր ունեցողները. Սուրբաթը պատասխաններ է քանի մը օր ալ սպասել, բայց Պատրիարքը հաստատ մնացեր է իր հրատարականին վերայ: (*)

—Վեհափառ Կաթողիկոսը Թիֆլիզի առաջնորդ Սուրենեան եպս. անունով կոնդակ մը գրած է, որով իր դժգոհութիւնը կը յայտնէ Թիֆլիզի Կոնսիստորային՝ Մարց կալուածական գործի առիթով:

—Յուլիս 19ին Բեթերսդորփէն Էջմիածին հասած է կայսերական համալսարանի ուսուցչապետ Պ. Մար. յարգելի ուսուցչապետը զբաղելով ձեռագիրներու մատենագրարանին մէջ, հետազօտեր և համեմատեր է քանի մը սուրբերու վկայութիւններ, ապացուցանելու համար որ վրացերէն թարգմանութիւնները հայ լեզուէն են եղած:

—Սեպտ. 19ին Թիֆլիզի մէջ եղած է Թիֆլիզի հայոց բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովը նոր կանոնաւորութեան համաձայն: Կովկասի նախկին Հայոց բարեգործական ընկերութեան բոլոր՝ ճիւղերն ալ կրնան շարունակել իրենց գոյութիւնը, եթէ նոր կանոնադրութիւնը ընդունին:

—Պարսկաստանի Ղազվին քաղաքի մէջ տեղական պարտիկ ամբողջ, իրենց հոգեւորականներուն առաջնորդութեամբ յարձակել են հայերու վրայ. երկուսուն արեւը և թալներ, 10 հոգի ալ վիրաւորեր են:

Յարձակման պատճառը սէյլիտի մը մահն է, որ կը վերագրին հայու մը. և ուրիշ հայու մըն ալ պարտիկ կնոջ մը հետ յարաբերութիւն ունենալը. իբր թէ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

Թրանսվալի նախագահ Քրիկէր ըսած է «պատասխանատուն ես եմ, ուստի և պիտի երթամ վտանգը դիմաորելու», այսինքն սահմանադրուիս:

Գործադրիչ խորհուրդը կը հակառակի Քրիկէրի այդ որոշումին:

—Հօլանտայէն բազմաթիւ մար-

(*) Ա՛յ կիտի «Իրաւունք»-ը գիտնական եւ ստուգարան խմբագիր: Ինչպէս կերեւնայ Պոլսոյ գրական հրատարակի վրայ հոշակ ունեցող աշխատակիցները խեղճ «Իրաւունքին» սեղեկութիւն չեն տար. եւ անոր խմբագիրն ալ ոչ մի բանի կը հաւատայ:

դիկ պատրաստականութիւն յայտնած են իբր կամաւոր Թրանսվալ երթալու:

—Սեպտ. 23 Պոլիս, կէս օրէն վերջը Մեծ Եպագոսին տղան Ղալաթիոյէն Իշխանայ կղզիները երթալու համար նաւակ վարձած միջոցին, գնդակահար եղած է ալպանիացի սպայէ մը: Մարդասպանը ձերբակալուած է. սճրագործութեան պատճառները յայտնի չեն:

Այս ընդ ցերեկի մէջ կատարուած սպանութիւնը ընդհանուր սարսափ պատճառած է:

—Ամերիկեան մամուլը, նոյնիսկ այն թերթերը որոնք կուզեն Ամերիկայի և Անգլիոյ դաշնակցութիւնը, խիստ կերպով կը յարձակին Անգլիոյ վրայ, որ կուզէ Թրանսվալը խեղդել:

—Ռուսիոյ կրթական նախարարութիւնը մտադիր է Ռուսիոյ զանազան կողմերը շարժական դպրոցներ հիմնել այլազգիներու համար:

—Երէկ Պոլկարիոյ նախարարութեան մէջ փոփոխութիւն տեղի ունեցաւ. նախարարութիւնը յանձնուած է Պ. Իվանչուի նախկին նախարարին:

Յ. ԶԱՆԿԻՆԻԿԱՆ

ՆՈՐ ԲՍԱՑՈՒՄ:
ՆԻՍԱՆԱԶԱՌԱՆՈՑ
Թիւ 389 Իսկիզի-պաշի

Կը վաճառուի ծրարատ, բոսթալի եւ աղբիւսագրի ամէն սեսակ բուրբ նաւե «Ճարժում»:

ԸՆԴԱՐՁԱԿ ԵՐԿԱՐԱՆ,
ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՄ ՀԱՅԱՎԱՆՈՑ

Հին եւ նոր Ազգ. երգերու գին 2 Փլ. սոյն երգարանը կը ծախուի Վառնա, Ա. Զարգարեանի գրատունը նաեւ կը գտնուի ամէն սեսակ զարգացան եւ վկայական գրքեր, դրամի փոխարէն կընդունի նաեւ նամակագրում. Կնուս եւ վաճառում ամէն սեսակ գործածուած նամակագրումներու:

Ս. ԽՈՐԱՍԱՆՃԵԱՆ

4 ՕՇԿԱԿԱՐ

Մուսալլա, րազմիք վոյոց, Հաւսի Հասանի օրհիջի սակ:

Ճաշակաւոր, տոկուն եւ ձեւաւոր կօշիկ շինել տալ ուղղող պէտք է գիմէ Պ. Սանկիան Խորասանճեանի, որուն ճարտարութիւնը մէկ փորձով երեւան կեւլայ:

Գիները խիստ գերամատչելի:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ, «ՆԱՐԺՈՒՄ»-Ի

Կը սպաղարուին ամէն լեզուէ այցեատման, հասցեատման, նամակագրութիւն, հարոսանեկան հրաւրագիր, մահալղ, ինչպէս նաեւ պրօշիւրներ:

Գիները յոյժ դուրամատչելի: Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին:

ՅԱՆՉԵՆՈՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԻՍԻԿ

Печатница «Взаимность» Варна